Միջազգային գիտաժողով

Սույն թվականի հուլիսի 11-ին ՀՀ ԳԱԱ նիստերի դահլիճում մեկնարկեց «Դինամիկ համակարգերը, ոչ գծային անալիզը և նրանց կիրառությունը» միջազգային գիտաժողովը:

Գիտաժողովն իր աշխատանքները շարունակեց Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետում, իսկ 14-15-ին՝ Ստեփանակերտում՝ Արցախի պետական համալսարանում:

ԱՄՆ-ից, Կանադայից, Ֆրանսիայից, Ռուսաստանից, Չեռնոգորիայից, Բելառուսից, Իրանից ժամանած մասնագետները հայ գիտնականների հետ միասին քննարկեցին դինամիկ համակարգերի ժամանակակից տեսության ակտուալ խնդիրները:

Գիտաժողովի կազմակերպիչներն էին՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի մաթեմատիկայի ինստիտուտը, ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի կենտրոնական տնտեսամաթեմատիկական ինստիտուտը, Երևանի պետական համալսարանը, Արցախի պետական համալսարանը:

Գիտաժողովը հիրավի «Գիտություն առանց սահմանների» կարգախոսի վառ դրսևորում էր: Ի դեպ, Արցախի պետական համալսարանում նիստերի ընթացքը օնլայն համակարգով տեղադրված էր ԳԱԱ ինտերնետ կայքում:

Կոնֆերանսի մասնակիցների ընդունումը, հյուրընկալությունը, կազմակերպման ծախսերը, այցելությունները Արցախի պատմական հուշարձաններ և գրքի հրատարակությունը իրականացվել է արցախցի բարերարի միջոցներով: Նրա իսկ ցանկությամբ մոսկվաբնակ մեր հայրենակցի անունը չի հրապարակվում: